

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կէս տարեկանը 3 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատուրեանի և Արասխանեանի խանութում:

Օտարադադարացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր թաւին 2 կոպէկ:

ՄՇԱԿ

Լրագրի ԱՌԱՆՁԻՆ Համարները 10 ԿՕ-
ՊԵՎՈՎ ծախվում են ՄՇԱԿԻ խմբագրա-
տան մէջ, պ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ լամպային
մագաղիտում, և „Кавказская книжная тор-
говля“ պ. Գրիգորեանի գրաքանդութանում:

Խմբագրութիւնը խնդրում է նոցա, որք
դեռ չեն վճարել ՄՇԱԿԻ ներկայ տարեկայ
ԲԱԺԱՆՈՐԴԱԿՆԵՐ, շուտով հասցնել նրան
խմբագրութեանը:
Հասցէն. Тифлис, редакция армянск. га-
зеты „Мшакъ“.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր ինքնավարութիւնը, — Ներքին տեսու-
թիւնը. Ներքին տեսուչի մասին. Նամակ Ներ-
սահմանային Ներքին-Արտաքին Ներքին լու-
րերի. Արտաքին տեսուչի մասին. Քաղաքա-
կան տեսութիւն. Մերձուր. Հայերի շարժումը
Թիֆլիսում. Նամակ Գերմանիայից. — Խառն
լուրեր. — Յայտարարութիւններ:

ՄԵՐ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Մինչև որ կառավարութեան այս վերջին
Թագաւորութեան ժամանակ շնորհիւ վերա-
նորոգութիւնները ղեկավարութեամբ են գոր-
ծադրվում. Ռուսաստանի ներքին նահանգ-
ներում, — նոյն վերանորոգութիւնները երբ
շնորհվում են մեր երկրին, Անդրկովկասին,
նրանք աւելի յարմար, աւելի պատեհ հոգ են
գտնում մեզանում գործարկվելու և զար-
գանալու համար:

Մինչև որ քաղաքային և գիւղական ինք-
նավարութիւնը Ռուսաստանի մայրաքաղաք-
ներում և այլ երկրի գլխաւոր կենտրոնական
նահանգներում դանդաղ և անհաստատ են
առաջ գնում, միշտ գանգատներ են լսվում,
թէ պատգամաւորները, ժողովուրդի ներկայա-
ցուցիչները չեն յաճախում քաղաքային դու-
մայի և գէնտովայի նստերը, այնպէս որ շատ
անգամ արդէն հարց էր բարձրացած, թէ
ինչ միջոցների պէտք է դիմել պատգամա-
ւորներին ստիպելու նիստերը յաճախելու հա-
մար. արդեօք ուժիկ պէտք է նշանակել, որ
նրանք ճշգրտեամբ այցելեն ժողովները, թէ
տուգանք պէտք է վերցնել այն պատգամա-
ւորներից որոնք չեն գալիս, — մեղանում նոր
մտցրած ինքնավարութիւնը որքան և պա-
կասութիւններ ունենար, արդէն ցոյց է տա-
լիս իրան ընդունակ իր պաշտօնի, և արժանի
իր կոչման:

Մինչև որ Ս. Պետերբուրգի Գուման ան-
ցեալ տարի հազիւ հազ կարողացաւ նստերը
կայացնել որովհետեւ ձայնաւորները չէին գա-
լիս, Թիֆլիսի Գուման ունեցաւ անցեալ տարի
միայն 19 նիստ և վճեց աւելի քան 100
գործ և միայն մի նիստ չը կայացաւ:

Բայց հասարակութեան բնական ընդու-
նակութեանը դէպի ինքնավարութեան իրա-
ւունքների գործ դնելը, ի հարկէ ինքնավա-
րութեան անող գործադրութիւնը կախված է
շատ անգամ և նախագահի ընդունակութե-
անից կառավարել նստերը, հասկացողութեամբ
առաջնորդել ժողովները: Այդ տեսակ հաս-

կացող և ընդունակ նախագահ Թիֆլիսի ինք-
նավարութիւնը գտաւ պ. Գ. Յ. Կիպիանիի
մէջ:

Մեր ինքնավարութեան գոյութեան առա-
ջին տարին, երբ նախագահում էր առաջ իշ-
խան Թումանով, յետոյ պ. Էլմիրզով, Գու-
ման ունեցաւ աւելի քան 50 նիստ (որքան
նստեր չը կայացան նոյնպէս) և վճեց հար-
ցերի թիւը աւելի քան 19 նստերի մէջ
վճեց գործերի թիւը:

Բայց ուշադրութեան արժանին այն է, որ
մեր Գումայի ճշգրտութեամբ այցելող ձայնա-
ւորների մեծ մասը պատկանում են փոքր
ցէն ղեկ, միջին դասին, այն ինչ խոշոր գու-
մարտերը, տները սեփականատէրերը, խո-
շոր ցէնիկ ներկայացուցիչները անհոգութեամբ
են վերաբերվում դէպի քաղաքային և հա-
սարակական օգուտները...

Գուցէ դրա մէջ պէտք է որոնել Ռու-
սաստանում ինքնավարութեան չափովելու
պատճառը: Կարելի է Ռուսաստանի պետու-
թեան ոչ մի մասի մէջ այնքան զարգացած
չէ միջին դասը, որքան Անդրկովկասում: Եւ
այդ միջին դասը մեզանում կազմում են մեծ
մասամբ հայերը: Մեզանում հասարակու-
թեան միջին դասը աւելի զարգացած է, աւելի
զարգացած է, քան թէ Ռուսաստանի ներքին
գաւառներում: Մեզանում ամբողջ հասա-
րակական ոյժը կայանում է միջին դասի մէջ
գրագիտութիւնը, արվեստներով պարագողները
(որքան և անկատար լինէին մեր արվեստ-
ները), կոշկակարից սկսած մինչև բժշկապետ-
ները և ինժեներները, վաճառականութիւնը,
մուսուր զարգացումը, ձգտումն դէպի ուսում,
ինտելեկտիւն, արդիւնադրութիւնը, —
բոլորը ամփոփվում է միջին դասի մէջ:

Հայոց ազգը իսկապէս կազմված է միայն
երկու դասից՝ ստորին դասից, — գիւղական, եր-
կրագործ մշակներից և քաղաքի արվեստաւոր
մշակներից, — և միջին դասից, որի մէջ ամ-
փոփված է մեր բոլոր մասաւոր և նիւթական
ոյժը: Այդ դասի երեխաներն են որ լցնում
են մեր երկրի թէ տարրական թէ միջնակարգ
դպրոցները, այդ դասի նոր սերունդն է որի
բազմաթիւ ներկայացուցիչներին կը պատա-
հէ թէ Ռուսաստանի, թէ արտասահմա-
նեան համալսարաններում և մասնագիտա-
կան բարձր դպրոցներում: Մեր երկրի միւս
ազգաբնակչութիւնները թուրքերը և վրացի-
ները մինչև այժմ ընդունակ չեղան կազմել
իրանց միջին մի գոյնը միջին դաս թուրքերի
մէջ տիրապետում է տգէտ, անգրագէտ, խա-
ւար, անշարժ ամբար, վրացիների մէջ տի-
րապետում է հոգաւոր անգիտականների դասը,
որ ճորտերի պաշտութեանից յետոյ, կորցնե-
լով իր միակ նեղուկ, երկրագործ ճորտ դասը,
անընդունակ լինելով ինքն աշխատել ինա-
յոյաբար և անտեսական կերպով ապրել
սկսում է ցոյց տալ մի շատ անմիջիւթ երե-
ւոյթ ծնելով անգիտականների պրօլետա-
րիատ մեր երկրում:

Մեր ինքնավարութիւնը ուրեմն հաստատ
գոյութիւն կը ստանայ, հիմնվելով միայն մի-
ջին դասի վրա, որ ամեն երկրում, մարդկա-
յին պատմութեան ամեն գաղութում եղել է
բոլոր հասարակական առաջնորդութեան աղ-
բիւր:

Եթէ մենք, հայերս, հրէաների վատ յատ-
կութիւններ ունենք, մենք ունենք և նրանց
լաւ յատկութիւնները:

Լեհաստանը, օրինակ, անընդունակ էր
կանոնաւոր անտեսական կեանքով ապրելու,
որովհետեւ ունէր միայն անգիտականների դասը
և ճորտերը (լեհացիների հասարակական կազ-
մակերպութեանը այդ կողմից նման է վրա-
ցիների հասարակական կազմակերպութիւնը)
և չէր ունենայ բոլորովին միջին դաս, եթէ
այդ դասը չը կազմէին հրէաները և գաղթա-
կան գերմանացիները:

Բայց մի և նոյն ժամանակ մենք հրէա-
նեցի նորանով բարձր ենք որ ունենք և
շատ նշանաւոր թուով երկրագործ դաս, որ
ամենեւին չունեն հրէաները: Մեր պարտաւո-
րութիւնն է և նրանց գոյութիւնը բարելա-
ւացնելու և նրանց դրութեան մասին հոգա-
լու: Գիւղական ինքնավարութեան մեր եր-
կրը մոցնելուն պէս, երկրագործ հայերը նոյն
գերը կը խաղան, ինչ որ խաղում են այժմ
հայերը քաղաքային ինքնավարութեան մէջ:

Յոյս ունենալով որ Թիֆլիսի Գումայի գա-
լու ընտրութիւններին կընտրվեն մեծ մասամբ
միջին դասի, փոքր ցէնիկ ներկայացուցիչները,
որոնք միշտ աւելի մեծ կուանդով են վերա-
բերվում դէպի հասարակական գործերը և
օգուտները, քան թէ մեծ գումարատէրերը,
տները սեփականատէրերը, խոշոր ցէնիկ ներ-
կայացուցիչները:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Թիֆլիզի Ներսիսեան ուսումնարանում
ուսուցիչ վարձելու և ուսուցիչ արձակելու մի
և նոյն է թէ և ծառայ և՛ վարձում և
արձակում: Այդտեղ ուսուցիչը, շատ կարելի է
իւր համար հանգիստ նստած, յանկարծ
անակոնակ կը կարգով առանց ցերեմոնի ար-
ձակվում է, ինչպէս մի հասարակ ծառայ:
Բայց առաւել կարող ենք ասել որ այդ
ուսումնարանում ուսուցիչ դրութիւնը ա-
ւելի վստահաւոր է, քան թէ ի՞նչ ծառայի,
որովհետեւ եթէ ի՞նչ մօտ ծառայի ծառա-
յութիւնն է արել 14 տարի, որը այդքան
ժամանակ ինչ օգուտ է տուել չը գիտեմ
թէ ինչ մի առանձին հանգամանք պիտի լինի,
որ ևս նորան արձակեն:

Այս օրերում Ներսիսեան ուսումնարանի
նոր հոգաբարձութիւնը և հոգաբարձութեան
անդամ տեսուչը մի զարմանալի քաջութե-
ան են արել հրամայելով այդ ուսումնա-
րանի ամենալաւագիւն ուսուցիչ Սալամբեգեա-
նին դասերը դադարեցնել և պատմում են որ
իւր թէ մտաւոր են արձակել նորան: Արձա-
կել մի այնպիսի ուսուցիչ, ինչպիսի է պ.
Սալամբեգեանը, մենք համարում ենք մի ա-
մենապատշաճ գործ, որը կարող է անել
ուսումնարանի վարչութիւնը դպրոցին: Պ.
Սալամբեգեանը ահա մօտ 14 տարի այդտեղ
ուսուցչութիւն է անում նկարչութեան և
ուսական գեղարդութեան և ահագին պը-
տուղ է ցոյց տուել դպրոցին. այս բանի հա-
մար քարերը ևս կաղաղակին: Ապացուցու-
թիւն. — նորա աշակերտներն են, որոնց մի առ-
մի յիշել շատ աւելորդ կը լինէր, որոնցից
շատերը այժմ անկախ ուսուցչութիւն են
անում այդ առարկաներից պ. Սալամբեգեանի
շնորհով: Համարձակ կարող ենք ասել որ եթէ
Ներսիսեան ուսումնարանը այժմ ունէր մի
երկու կարգին ուսուցիչներ, առաջինը հա-
մարձակ պէտք է ընդունել պ. Սալամբեգեա-
նին և ինչ էր կարծում, — այդ ուսուցչին,
յանկարծ, առանց հարցնելու, առանց խօ-
սեցնելու արձակել, դուրս գցել ինչու.
որովհետեւ, եթէ պ. տեսուչը քեզ ասէ
ան ինչ ղճ, դու պէտք է լուս, ապա թէ
ոչ կ'արձակվես, եթէ տեսուչը քեզ ասէ,
պա՛ր մ'ն, դու հէ՛նց պատճառ ես

գտնում, որ դասին ուշ գնաս, —
իսկ դու պատասխանես. «Ինչո՞ւ» այդ-
պիսի յիմար առաջարկութիւններ չ'անէք ինչ
պ. տեսուչ, այն ժամանակ երեւել հոգա-
բարձութիւնը, առանց հրաւիրելու ուսուցչ-
չին, միայն տեսչի լոկ խօսքերով, արձակել
նորան հրամայում է, այն հոգաբարձութիւնը,
որ երկու օր է մտած իւր պաշտօնին և ոչինչ
հասկացողութիւն չունի ուսուցչի նկատմէն,
չը գիտէ աշխատանքների, չը գիտէ զոցա
արժանաւորութիւնները, և այդ հոգաբար-
ձութիւնը պէտք է ղեկավար լինի ուսուցչի
վիճակին: Ինչո՞ւմ ասացէք, պարոններ, որ
արժանաւոր և իւր պատիւը ձանաչող ու-
սումնական երեսասարը յանձն կանէ Ներ-
սիսեան ուսումնարանում ուսուցչի պաշտօն
ստանալ, որտեղ ոչ պատիւն է ձանաչվում,
ոչ գիտութիւնը հասկացվում. որ երեսա-
սարը կը մտնէ այն կառավարութեան տակ,
որի կառավարչները մի քանիսը այնպէս են
իւրեանց կարծիքները և համոզմունքները
շուտ շուտ փոխում, ինչպէս ես իմ չափիկ.
վաղւայ ապատամիտը այսօր ևս կընդհան
է դառել, պատճառը. — չը գիտեմ... Ներսիսեան
ուսումնարանը այսօր դառել է ուղիղ ան-
կեղծութիւն: Պ. Սալամբեգեանը արձակվեց, հա-
մար այդ մի կամ երկու ուսուցիչ ևս, որոնք
կարող են համարվել կարգին, այն ժամա-
նակ կը մնան ուսումնարանում՝ բոլորը երե-
ւել մանկավարժներ չեղարարի սխտեմա-
յով:

Հրաչայ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Սկսած 1876 թ. 28.

Ուրբաթ, սեպտ. 17, Երեւանի հայ խնտիլգէն-
ցեան տեղւոյս գրատանը ունեցաւ մի ժողով. Ժո-
ղովի նպատակն էր խնդրել կառավարութիւնից
Երեւանում բաց անել մի ուսումնարան և երկար
վիճաբանութիւններից յետոյ վճեց խնդրել բաց
անել կամ մի արհեստանոց, կամ ընթակաւ ու-
սումնարան: Ամեն մի նախադրում հաւաքվում է
300000 օրօք անուանված հարկը, որ գործ է դըր-
վում չապարան պահելու և այլ պէտքերի համար:
Ահա այդ հարկից Երեւանի նահանգում, ինչպէս
ստուգում են, 600,000 օրօքի մնացորդ կայ: Իսկ թէ
ինչտեղ պէտք է գործածուի այդ օրօքները, այդ
հարցը պէտք է վճե Թիֆլիսում սկսածներին
լինելու մասնաժողովը, որ կազմուած է կապիտա-
նահանգապետներից և ամեն մի նահանգից ընտ-
րած երկու պատգամաւորներից: Ուրբաթ օրը վճե-
վեցաւ խնդրել Երեւանի պ. նահանգապետին, որ
նա աշխատի Թոյուտովիւն ստանալ կառավարու-
թիւնից մնացորդ հարկի մի մասը գործածել Երե-
ւանում մի արհեստական կամ ընթակաւ ուսում-
նարան բաց անել, նոյն տեսակ մի թուղթ էլ ու-
ղարկուել է և պատգամաւորներին, որպէս զի
նրանք իրանց կողմից յայտնեն ժողովում Երեւանց-
ւոց ցանկութիւնը: Այնպէս մի մեծ բախտա-
ւորութիւն կը լինէր Երեւանի համար այդ ուսում-
նարաններից մէկի բացուելը և մանաւանդ ար-
հեստանոցի, և հայ ինչի համար Երեւանը արդէն
ունի մի պրոգնիստիկա, որտեղ իրանց երեխայոց
կրթական ուղղութիւն տալ ցանկացող ծնող-
ները կարող են յանձնել իրանց որդիքը: Հիմարիտ
է, այդ ուսումնարանում տեղի պակասութիւն կայ,
որի հետեանքն է լինում շատ երեխաների չըն-
դունուելը, բայց երբ կը բացուի արհեստանոց, այն
ժամանակ այդ անյարմարութիւնը ինչն ըստ ին-
քեան կանոնաւոր, որովհետեւ քաղաքիս թէ վա-
ճաւականները և թէ արուեստաւորները նոյնպէս
և նահանգի ընդհանուր բնակիչները իրանց երե-
խայոց արհեստանոցը տալով պրոգնիստիկայում,
տեղ կը բացանէին նրանց համար, որոնք ուզում
են կրթական ուղղութիւն ստանալ, և մի և նոյն
ժամանակ այդ ուղղութեանը համեմատ չարու-
նակել ուսումը, որ մի կտոր հաց գտնեն Գուգե-
մեզ կը պատասխանեն, որ հասարակ ժողովուրդը,
տեսնելով, որ հարուստները տալիս են պրոգնի-
ստիկա, ինչն էլ ձգտում կունենայ դէպի այդ ու-

սուսմարանը, որ նրա որդին էլ չլինողներէն, կամ փաստաբան լինի (ինչպէս և անում է այժմ): Բայց մի և նոյն ժամանակ այդ ժողովուրդը այդքան էլ անգործական չէ: Նա տեսնում է, որ շատերը աւարտում են այստեղ և միջոց չունեն թիֆլիս գնալու, մանաւանդ Ռուսաստան, և այդպիսով ստիպուած են լինում կամ յաւիտեական զբաղիր լինել, կամ պարապ ման գալ, ուրեմն նա մեծ ուրախութեամբ իւր որդուն կը տայ արհեստանոցը կամ բէալական ուսումնարանը, որոնք ապահովացնում են օրական հացը, իսկ այս վերջինից դուրս եկողը, եթէ դա բացողը, կարող է և համալսարանի մանկ պատրաստուելուց յետոյ, Նրեանում խեղճները շատ են հարուստներին, ուրեմն այդ մարդիկը միջոց կունենան օրական հացը վատակել, իսկ հարուստները կարող են բաւականաւոր նրանով, ինչ ունեն (պրոգրեսիւսիս): Նրեանի բնակիչները զվարարաւոր հայեր և մասնատեղեւներ են, դրանք են արհեստաւորներ և վաճառականներ (ծառայողներին չիմ յիշում): Եթէ անցնէք Նրեանի բաղարով, կը տեսնէք, որ խեղճ մասնատեղեւներ ամբողջ օր կաշի է կրծում, որ քանի կօպէկ աշխատի, խեղճ հայ դարբինը նոյն մի քանի կօպէկ համար նահապետատեղեւ ձևով այրելու է կրակի մօտ: Միթէ մի մեծ, մինչև անգամ փսփ գործ չէ թեթեւացնել դրանց աշխատանքը, բարեբեկ դրանց նիւթականը, ղճուկ են խնդրել արհեստանոցի կամ բէալական ուսումնարանի համար և ես այդքան չէի երկարացնել լուսըս, եթէ չը լսէի, որ մի քանիսը ուսում են նորից ժողով կազմել, կրտսիական գիմնազիա խնդրելու: Բայց եթէ յաջողութիւն էլ յոյս կայ, որ Նրեանի պ. նահանգապետը, որ այդպէս սիրում է երեանցւոյ և հասկանում է նրանց դրութիւնը, կաշխատէ արհեստանոցի համար... այս տեղեկութիւնս սխալ չը դուրս եկաւ: Օրերուս և կըրկին կայացաւ մի ուրիշ ժողով նոյն պարսններէից և ինչպէս ասում են պարսնների կարծիքները փոխուել են և փոխանակ արհեստանոցի և բէալական ուսումնարանների համար խնդրել պատրաստուելու, վերջին տեղ ուղում են կրտսիական գիմնազիա: Այս դէպքում կասկած չը կայ, որ եթէ եղաւ թոյլտուութիւն, կրտսիական համար կը լինի: Իսկ խեղճ բնակիչները որդիքը պէտք է նոյն դրութեան մէջ մնան: Բայց թող չը յուսահատուեն այդ ողորմականները, կրտսում, որ պ. նահանգապետը ամենից լաւ հասկանում է դրանց դրութիւնը և եթէ գործը մնաց նորին գերազանցութեան, նա կը հոգայ, որ արհեստանոց բացուի:—Ամսոյ 23-ին ՎԿԵ. կաթողիկոսի տոնախմբութեան օրն էր: Այդ օրուայ համար հրապարակուեցին էջմիածին Նրեանի քաղաքային երաժշտները, որոնք երեք օր ամուսն էին վաճառի գալիս: Սուրբ պատարագից յետոյ եկեղեցականները և ժողովուրդը հանդիսով գնացին ճեմարանը: Եկեղեցականները շարական էին երգում, իսկ երաժշտները մարչ էին անում: Ճեմարանի գալիս Նորին Վեհափառութեան և ժողովրդի առաջ սրբ. Գարբիէ Ալմազովսկին մի ճառ կարդաց զբարեբեկութեան, որ մեծ մասը համար հանրապետներից անհասկանալի էր: Նորին սրբազնութիւնը, եթէ չեմ սխալուում, իւր ճառի մէջ յայտնեց, որ ճեմարանը դեռ մի միջնակարգ ուսումնարան է չորս դասարանով, որ իւրաքանչիւր տարի պէտք է մէկ դասարան աւելանայ մինչև վեցերորդը, և յետոյ պէտք է ճեմարանական դասախօսութիւններ լինեն: Կարդացուեցան նոյնպէս մի քանի զբարեբեկ օտանաւորներ, որոնցից յետոյ Նորին Վեհափառութիւնը մի քանի ազդել տուեցրով յայտնեց, որ մեծ ուշադրութիւն է դարձնելու ազգային բուստարութեան գործի վրա: Էջմիածին միջնակարգ ուսումնարանում քեղցնիկ կարգապահութիւն կայ, նոյնպէս հրապարակուեցին նախ ուսուցիչներ շնորհիւ գերապատիւ Ալմազովսկու:—Հանգուցեալ Ներսէս կաթողիկոսի գերեզմանը շատ տնուր տպաւորութիւն է գործում: Միթէ այդպէս քանդուած պէտք է պահել անմուսանալի կաթողիկոսի գերեզմանը: Ես տեսայ մի քանի Աշտարակցի պառաւներ, որոնք համբարում էին այդ գերեզմանի քարը:

Յ. Տէր-Գրիգորեան.

ՆԱՍՏԱՆ ԵՆԵՔԵՆ-ԱՅՈՒՆԻՍԻՑ

Սեպտեմբ. 2-ին 1876 ամի.

Անցեալ ապրիլ 29-ից «Մշակ» մէջ տպած իմ մի նամակը մեր գիւղացիներից մի քանիսի վերա, ինչպէս յայտնուեցաւ, վատ տպաւորութիւն է գործել, որոյ պատճառաւ հասարակաց յառաջադիմութեան խնդրդուն ծերուկ բարեաներից մէկը չը կարողանալով սանձել իւր զայրոյթը հասարակութեան մէջ անտիկ յանդիմանութիւններ էլ կար-

դաց նամակի հեղինակի վերա. «այդ ու է մից այսպէս խայտառակում...» Այդ նամակի մէջ ես յայտնած էի հասարակութեան գոլութեան արժանի ընթացքի միայն աննշան կէտերը, իսկ ամենազրկաւորի վերաբերութեամբ բաւականացած էի մի քանի խիստ սահմանափակ բառերով, որոնք միայն հասկանալի էին մեր հասարակութեան, որովհետեւ մենք չունէինք ուրիշ նպատակ (ինչպէս կարծում է ծերուկ բարան), բացի այն՝ որ զուգէ թեթեւ աղբարարութիւններով մտածել սկսեն դոքա իրենց բունած ընթացքը մասին: Այդ ամենազրկաւորը կարծեմ պարզ հասկանալի է, որ՝ ուսումնարանին է, առանց որին չը կայ կատարեալ կեանք և որ այդ պատճառաւ ներկայ դարուս մէջ դարձած է կենաց ամենազրկաւոր պահանջը: Ինչպէս հացը և ջուրը, Բայց որովհետեւ ահա արդէն սեպտեմբեր ամիսն է, իսկ Ն. —Ազգութեւ դեռ չը կարողանալով ազատուել հասարակութեան զործիչ անդամների հասկանութիւնից, —որին զոհ դարձան 1868 թուականում գիւղի Հոգևոր դպրոցը և 1872-ին նոր ծրագրուած ծխական դպրոցը—կանգնած է նոյն անշարժութեան մէջ, ուստի հարկ եմ համարում այս անգամ ընթերցողաց և նոյն իսկ իւրենաց, այդ դործիչների դատողութեանը համաձայնաբար ներկայացնել նոյն բունած ընթացքը այդ դպրոցական խնդիրների վերաբերութեամբ:

1856 թուականին մեծագոյատիւ պ. Մկրտիչ Զարգարեանցի առատաձեռն նուիրատուութեամբ կարգուեցաւ մի վարժարան, ուր գնում էին գիւղի աղայքը առանց խտրութեան, և ուսանում բոլորովին ձրի, միայն հայոց լեզու: Այս դրութեան մէջ վարժարանը շարունակուեցաւ 7 տարի և այն ժամանակուայ ուսանողներից քանիսը յայտնի են իրենց լեզուագիտութեանը հայերէնի մէջ: 1863 թուականում վարժարանը ստացաւ իւր բարեկարգութիւնը: Հանգուցեալ Մատթէոս կաթողիկոսի կողմակաւ հաստատուեցաւ Ն. —Ազգութիւնի հոգևոր դպրոց, և ձեւացաւ նախակրթարանից և առաջին տ. երկրորդ դասարաններից, որոնց մէջ դասախօսութիւն էին անում երեք ուսուցիչներ: Ուսանելի առարկայքն էին՝ հայոց և ռուսաց լեզուներ, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, հայոց, ընդհանուր և սրբազան պատմութիւններ, կրօնագիտութիւն, վայելագործութիւն և եկեղեցական ու ազգային երգեցողութիւնք, վերջին երկու տարիներում սկսվեց և Ֆրանսերէն լեզուի դասախօսութիւնք: Այդ ժամանակից ուսումնարանը ծխական Գալովը քահանայ Տէր-Անդրէասեանի վերապետութեան տակ, ամառ խնայելու համար լեզուները դրութեան մէջ, հոշակելի եղաւ ամբողջ Նրեանում նահանգում և շատ արժանաւոր այցելուներ ի սրտէ բաւական էին մնում նորանից, և այսօր էլ եթէ այդ գիւղացիներից փոքրի շատէ ուսման տեղակ երկատարներ կան, բոլորն այն ժամանակուայ ուսանողներից են: 1863 թուից սկսեալ, երբ ուսումնարանի պահանջը աւելացաւ, կարգուեց և թոյլի ստանալ ունեւոր աշակերտներից, բացի այդ վերջին երկու երեք տարիներում ուսումնարանը ստանում էր և մեծագոյատիւ պ. Պօղոս Աղամալեանցից առատաձեռն նուիրատուութիւն:

Այս վիճակի մէջ ուսումնարանը անդադար յառաջ էր գնում, բայց որովհետեւ չը կան յաջողութիւնք առանց անցողիկութեանց, այսպէս և մեր ուսումնարանի համար չուտով սկսեցին անյաջողութիւնք: Գոյողիկութեան առաջին դարձի մէջ ծաղկեց ետակամութիւն և սկսեց փոքր առ փոքր նախանձով վառել բոլորին: Հիմարտութիւնը չը ծածկելու համար, ես ստիպուած եմ խոստովանել, թէ և բոլորովին ակամայ, որ նոյն նախանձութեան միակ պատճառը այն էր, թէ ինչու ստորին երախտապարտ դասը պ. Զարգարեանցին բարեբար է անուանում, քանի որ իրանք ես վճարում են թուշակ (չը նայելով որ նոյն վճարած 6 կամ շատ 10 բոլորներով ուսումնարանի ծախքերի կէս բաժինը հազել կը հաւաքուէր): Թէ ինչու յիշեալ քահանայն անուանուում է հոգաբարձու և վերապետուում և ինչու ուսումնարանի գոյութեան յարգը նորան է ընծայվում, քանի որ նա ստանում է իւր վարձը (մի շատ չնչին վարձ որ ստանում էր միայն կրօնագիտութեան դասատու լինելու համար): Այս ընթերցող այսպիսի մտածութիւնները սկսեցին խուլիլ մեր հասարակութեան բարեպաշտ աղաների մտքերը և փոքր առ փոքր ազդել ուսումնարանի յառաջանցողութեան, այնպէս որ վերջին երկու տարիները համարեն շարունակվում էր բռնի, իսկ երբ 1868 թուականում յիշեալ Զարգարեանցը, զգուած վերջապէս ամբողջ բունած ընթացքից, և նոյնպէս իւր հանդամանքներից ստիպուած, հրաժարուեցաւ ուսումնարանին օրնութիւն տալուց: Նոյն թուի յունիս 24-ին կղած հարցաքննութիւնից յետոյ յայտնան փակուեցին նորա դռները: Եւ նոյն անձինքը, որք աղաղա-

կում էին անդադար, թէ թող Զարգարեանցը և Տէր-Անդրէասեանը հրաժարուին ուսումնարանի հոգաւարութիւնից, մենք առաւել պիտի բարեկարգենք, իրենց տունի կատարեալ մոռացութեան Նոյն օրից սկսեալ մեր մեծագոյատիւ աղաների խեղճ աղայքը բոլորի ոտերով, արձակ գլխով ամբողջ օրը թափառում են փողոցից փողոց, մէկ պարտիզը միւսը, պտուղներ քաղելով, թաշնոց բոյներ քանդելով, իւր քանդելով, և այլն և այլն, և նոյն ծնողքը երեխայական անմեղ ժպիտով նայում են նոյն վերա, կարծելով թէ արդէն իրենց բոլոր պարտաւորութիւնքը դէպի համար օրդիքը կատարել են, խոզներով նոցա կամար քանի մի հարկաւոր մանկներ: Գժադղ ծնողներ, որքան էք դուք նշուում ձեր ծնողած թէ և բոլորովին անիրաւ տեղից, որ ձեզ ուսման չեն տուել, ձեր որդիքը ձեզ օրդի պէտք է նշուին, որ դուք մի այսպիսի ժամանակ խնայում էք նոցանից մի կտոր թուղթ և գրիչ և մի քանի մանկթ, քանի որ ձեր չուսողութեանց համար տասնաւորներ, հարկաւորներ չէք խնայում: Եւ այդ ժամանակ ձեզ ծանր է թվում, երբ ձեր պարտականութիւնքը ձեզ յիշեցնել են տալիս:

Սակայն ուսումնարանի փակուելուց ուղիղ չորս տարի անցած, մի երկու դրոյիները շնորհիւ նոքա նոր ի նորոյ ուշի եկան, սկսեցին ապք տաք մտածել նոր ուսումնարան հիմնելու համար և կամենալով աւելի հաստատութիւն տալ նորան, որդեկցին ժողովրդից հաւաքել դրամական նուիրատուութիւնք: Այդ նպատակաւ սկսեցին հիմնադիրները ստորագրութիւններ ժողովել, որոց թիւը Մ. Ռոցի եռանդաւորն աշխատութեանց շնորհիւ ամենակարճ միջոցում հասաւ 31-ի: Այդ հաստատուելիք ուսումնարանի համար շուտով ընտրեցին հոգաբարձուներ պ. պ. Պ. Ա-ցին, Ա. Ն-ցին և Ռ. Ռ-ցին, երեք այնպիսի անձանց, որք վայելում էին ժողովրդի կատարեալ վստահութիւնը: Այնուհետ 1872 թ. յունիսի 1-ին ամբողջ ժողովուրդը խնդրաբար դիմեց Նորին Օծութեան, ամենայն Հայոց կաթողիկոսին, խնդրելով առաջին յիշեալ հոգաբարձուների հաստատութիւնը և երկրորդ թոյլտուութիւն մեր եկեղեցական արդիւնները ուսումնարանի վերա բանացնելու: Նորին Վեհափառութիւնը ի սրտէ համակրելով ժողովրդի այդ պահանջին, անմիջապէս առանց յետաձգելու կողակաւ հաստատեց հիշեալ անձանց հոգաբարձութիւնը և առաւ թոյլտուութիւն եկեղեցական արդիւններն զործադրելու յօգուտ ուսումնարանին: Բայց թէ այդ ընտրեալ հոգաբարձուքն ինչպիսիս արդարացին Նորին Վեհափառութեան և մանաւանդ թշուառ ժողովրդից ակնկալութիւնքը, ուրիշ անգամ կը տեսնենք:

Գիւղացի

ՆԵՐՔԻՆ ԼՈՌԵՐ

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ հաղորդում են հետեւեալը: Վկայեղ ձմեռայն ցրտերը արդէն սկսվել են, Սեպտեմբերի 22-ին և 23-ին արդէն եկաւ ձիւն: Ցուրտը հասնում է մինչև —30 աստիճան: Բժամբար: Անցեալ ամառը երկու դարձի փոփոխութիւններ են եղել Մոսկովայում: Նախ բոլոր փողոցները և հրապարակները այժմ լուսաւորվում են գաղով, մի և նոյն ժամանակ և լապտերների քանակութիւնը բաւական աւելացած է: Երկրորդ փողոցները կարգին սպառնալուած են, իսկ մի քանի տեղ մինչև անգամ արժապտով են ծածկված, այնպէս որ առաջվայ փոսերը, այն սարսափելի փոսերը աներկայացել են և այժմ ձիւքայ երկաթթուղին անցնում է քաղաքի բոլոր գլխաւոր փողոցներով:

ԳԱՆՁԱՎԻՑ մեզ գրում են որ շուտով հաստատակաւ է մի բնօրի հայերէն լեզուով նախկին յաջորդ Գրիգոր վարդապետի գործունէութեան մասին, Գանձակում անձամբերութեամբ են սպասում գրվածքի լոյս տեսնելուն, հաստացած լինելով որ հեղինակի զրկածը աւելի հաստատելու է յաջորդի անգործունէութիւնը, քան թէ գործունէութիւնը... Եւ ճշմարիտ, Բն ունի յիշած, գործած, որ նորա պաշտպանը ինչ գրի...

Մի քանի ժամանակից ԹԻՖԼԻՍԻ փողոցները սկսել են ամեն օր ջրի, քայլ մի և նոյն ժամանակ ջրից առաջ երբեք ահա իստակում փողոցները, այնպէս որ ջուրը անում են ամեն տեսակ աղբի վրա: Գորանից գոյաւորում է անտանիքի հոտ բոլոր փողոցներում, և այդ կարող է պատճառել մեր քաղաքում զանազան հիւանդութիւններ:

Ստացանք հետեւեալ պարբերական հրատարակութիւններից: Փորձի երկրորդ տետրակը, «Երբորոք ժողովարժական անագրի յունիսի տետրակը և վեցիցայում հրատարակվող «Բաղմա» մէջ եռամսեայ հանդէսը: Կարծես թէ ճշմարիտ չառ հարուստ է հայոց գրականութիւնը—բայց երեքի մէջն էլ բան չը կայ կարգաւ:

Այսօր դուրս եկաւ ԹԻՖԼԻՍԻՄ, պ. Զանգովի տպարանից զօկտօր Գրիգոր Ար ծրուում է մի փոքրիկ բնօրի ուսանելի լեզուով «Восточный Восток» (Արեւելեան հայոց) վերագրով: Գինը 5 կօպէկ է: Եւսկալում է «Մշակ» խմբագրութեան մէջ, պ. Զ. Գրիգորեանց անցնել գրականաւորացում և պ. Մատուրեանի լամպերի մաքաղիւնում:

Հոկտեմբերի 10-ին ժամը 9 1/2 երեկոյան պատահեաւ մի ցաւալի անցք ԹԻՖԼԻՍԻՄԻ: Թիւրքաց հիւպատոսը և նրա կինը (երկուսն էլ յոյներ են) սպանվեցան իրանց տանը, անյայտ չարագործների ձեռքով:

Կիրակի ամսին 10-ին ԹԻՖԼԻՍԻ վերանորոգված հայ-դերասանական խումբը ներկայացրեց «Թիգր» տանջում է» թարգ. դրամա երեք արարուածով և վոգէլիլ «Պիպի տկճուր»: Միջ թվում է որ վերջինեալ պիէսան ամբողջապէս թարգմանած էր կամ գոնէ ամբողջապէս չը ներկայացրին: Ինչ և իցէ անաջող կերպով անցաւ այդ պիէսան: Աւելորդ ենք համարում մի առ. մի յիշել այստեղ դերասանների սխալները, ինչպէս երևում էր պարտները իրանց դերը ուսումնասիրելու փոխանակ, սերտել էին միայն: Մանաւանդ պ. Մանդակունին և օր. Շամիրաւի վատ էին: Վերջապէս հարկաւոր է որ մեր թատրոնական խումբը այնքան ընդունակ լինէր, որ յաջող կերպով կարողանար ներկայացնել թարգմանական պիէսաներ, որոնք ընդհանուր մարդկային են: Հասարակութեան թէ այն մասը որ հասկանում է թատրոնը, և թէ միս մասը որ չէ հասկանում, այս անգամ սառը կերպով էր նայում ներկայացմանը, որ չէր յաջողվում, մինչև որ սկսվեցաւ վոգէլիլը, որ մի փոքր կեանք և շարժումը տվեց դանիլին: «Պիպի տկճուր» կատարելով ժամանակ լաւ էին խաղում դերասանները և կարելի է ասել զիջող տանք էին: Բայց հայ հասարակութեան թատրոնական ծարաւը միայն այդպիսի տկճուրներով չէ կարելի յագեցնել: Պէտք է երեմին և փոքր ինչ ծանր բաներ: Այս անգամ դարձեալ Թիֆլիսի հայ հասարակութիւնը ապացուցեց իր ծուլութիւնը հայոց թատրոն յաճախելու վերաբերութեամբ: Գարշիճի կէսը համարեա դարդակ էր: Այն էլ լաւ է, եթէ մուտքը կարողանայ ծածկել ծախսը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՂԱՌԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՒՄ: Ռուս դեպան, գեներալ Իգնատիւ իր ընտանեկով հասաւ Հոկտեմբերի 7 (19) Կ. Պօլիս: Հեռագրով հաղորդում են փարիզից որ «France» լրագիրը հեռեկայ քաղաքական լուր է հաղորդում Ռուսաստանի և Բուլղարիայի մէջ իր թէ կապված են պայմաններ, որոնց գործութեամբ Բուլղարիայ իշխան կարողութեամբ է անաշխիւ Բուլղարիայի թագաւոր, Բուլղարիայի պէտք է միանայ Բուլղարիայ և Տրանսիլանիայի մի մաս, իսկ Ռուսաստանը կը ստանայ Բուլղարիայի բերանը: —Русскій Мир— լրագրին հաղորդում են հեռագրով որ այս օրերս հասան Բեզբրա 500 պրուսացի ուշաներ: Առ հասարակ բաւական շատ գերմանացիներ կան այժմ Սերբիայի գործում: Վերջին ճակատամարտերը թուրքերի դէմ բաւական աջող էին սերբիական զորքի համար: Չեխոսլոացիները վերջին թուրքաց Մեդան ամրոցը:

ԱՆԳԼԻԱ: Խաղաղութեան վերաբերութեամբ վերջին քանակութիւնների պատճառով, Լոնդոնի «Times» լրագիրը յայտնում է իր առաջնորդող յօդվածում, որ Անգլիայի կողմից կատարեալ խեղադարձութիւն կը լինէր թափել թէ և մի կաթիլ արիւն Գամանեան պիտու լինէր օգուտները պաշտպանելու համար:

Երկար տատանումներից յետոյ ԻՏԱԼԻԱՅԻ կառավարութիւնը վճռեց արձակել օրհնագիր ժողովը և նոյնմեր ամիս համար նոր ընտրութիւններ նշանակել:

ՄԵՐԺՈՒՄ

Եթէ ճաճական թերթերուն գրածին կրնայ հաւատ ընծայուել՝ կառավարութիւնը վերջին ընդհանուր ժողովով մերժեց եւրոպական տերութեանց ըրած հաւատութեան առաջարկութիւնները և որոշեց պատերազմը շարունակել զինարարաւոր պայմանագրով լուսնային եղբոր ճաճական թերթերու այս լուրը բաղդատելով Անգլիական մամուլի յաճախ կրկնած սա խօսքին հետ թէ՛ եթէ Օսման կառավարութիւնը ներկայ պատեհութիւնը կորսնցնելով, որ և է պայմանաւ հաջողութիւնը չը կընէր՝ Բուսիան իր դէմը պիտի գտնէ, Պէլքատ չը հասած՝ կրնանք հետեւցնել թէ քանի մը օրէն Բուսիայ դրօշակը վարտուելով, շատոց ի վեր սպասուած մեծ պատերազմը պիտի սկսէ:

Այս պատերազմը եթէ ըլլայ, ինչպէս ամեն պատերազմ՝ սա ալ դժբաղդութիւն

մը և թշուառութիւն մ'է, սակայն կրնա՞ր արդեօք կառավարութիւնը ատոր առաջին առնելը—կառավարութիւններն ալ եթէ կրնան անհատ մտածելը կրնա՞նք հետեւցնել թէ ատոր առաջը կրնար առնել ուղածնին տալով ճիշդ այնպէս ինչպէս որ անկրաւ մէկը միտքը դրած ըլլալով քեզ հետ կուրի կուգայ անկրաւ պահանջները կրնէ և դու այդ անկրաւ պահանջները իսկոյն ընդունելով, կուրի ետ կը ձգես, սակայն այս կարգի մարդոց արի պատուանունը ինչպէս չը կրնար տրուիլ նոյնպէս ալ այդ կարգի կառավարութիւնը արի ըլլալէ կը դադրին, զի արիութեան պահանջներն է անկրաւութիւնը մեր ժեղ և ճեղքուելէ վերջը կամ յաղթական իրաւամբ անկրաւ պատժել և կամ յաղթեալն պարտականութեամբ եղած անկրաւ պահանջներն ընդունուիլ այսպէս ալ մեր կառավարութիւնը կամ յաղթական իրաւամբ իր մեղքները մէջ պիտի կենայ և կամ յաղթուելով եղած առաջարկութիւնները պիտի ընդունի այս է ընդհանուր աշխարհի օրէնքը, յորմէ չէր կրնար զարտուրութիւն մը համարուիլ Օսմանեան կառավարութիւնը առանց իր պատուոյն արատ մը բերելու:

Արդ բնական է որ կառավարութիւնը առանց դաշնակցի մնացած ըլլալով Բուսիոյ դէմ տաճկական մամուլը հիմայ առաջինէն աւելի Օսմանեոց կրօնական գրգռողները պիտի արթնցնէ և այդ միջոցաւ Օսմանեան բանակին կամաւորաց և զինուորաց թիւն աւելցնէ, բնական է նաեւ որ այդ մամուլը գործը յուսահատական ճիգերու բերէ հասցնէ, որպէս զի բանակին գործութիւնը աստիպեցնէ, ուստի մամուլը չայտգ մեծ խոհանութիւն պէտք է հիմայ գրգռեալ կրնայ տեղը չը տալու, չեմք բեր նուաստանայ, այլ որչափ կարելի է աշխատել հաւանական վտանգը հեռացնել և խօսք մը պակաս բնէ տալ:

Այս խոհանութեան համար երկար ժամանակ համբերելու հարկ չը կայ, զի երկու մեծ տեղութիւնաց պատերազմներ ապստամբական պատերազմներու պէս երկար չեն կրնար տեւել, այլ մէկ քանի ձակաւորամարտէն վերջը խոյն պատերազմին բազմ կորույտի և անմիջապէս հաշտարար միջանկրութիւն մը կը յաջորդէ, սակայն ինչ պիտի ըլլայ պատերազմէն վերջը, այդ գուշակել կարելի չէ միայն եթէ յաղթուի ալ Օսմանցի դարձեալ իր պատուոյն նուաստ արատ մը բերած չը պիտի ըլլայ, որովհետեւ պատերազմներու մէջ թէ յաղթուի և թէ յաղթուիլ նուաստութիւն չը բերի, ինչպէս Գաղիացիք Գերմանիայէն յաղթուելով նուաստացած չըլան, սակայն յաղթուելէն ետքը հաշտութեան պայմաններուն մէջ մեծ գզուշութիւն բանեցուցին նուաստ պայման մը չընդունելու մասին, որովհետեւ իրենց պատերազմական ընթացքին մէջ նուաստ բան մը չըրին, այսպէս ալ Օսմանցիներն սոյն հաւանական երեցած պատերազմին մէջ հարկաւ նուաստ ընթացք մը չը պիտի բռնէ որ առաջարկուելէ պայմանաց մէջ նուաստ ակնարկութիւններ ըլլան:

Միայն թէ մէկ կարեւոր ճշմարտութիւն կուրիք անկիւններն տաճկական մամուլն առնելէ զինչ անհրաժեշտ ապացոյցներով, որովհետեւ հետեւեալը ծանր կըլլայ եթէ այդ տաճկական մամուլը այժմէն ատոր վրայ խորհելով գզուշաւոր ընթացք մը չը բռնէ:

Երբ տեղութիւնը Անտարպի կոմիտէի ծանուցագիրն ընդունելով չէրէքի ու Պանիոյ խնդիրը վերջացնել կուրի և ատոնց վրայ Պերլինի մէջ բռնեցեալն զուարթուելու խօսքեր կար՝ Սէրանիկի մէջ մէկ քանի ինքզինքը և աշխարհը չը գիտցող Մահմետականներն երանք քանի մը ընտաօս մեռուցին, որով Պերլինի բռնեցեալն մէջ անկէ առաջ կարգադրուիլ որոշուած խնդիրը մէկի թողել տալով այդ բռնեցեալն որոշումները ծանուցուցին, և ատով ընդհանուր կոտորած մը նշմարուելով Պերլինի ծոցը բոլոր մեծ տեղութեանց նաւատորմիւններն եկան հաճկաւ տանի բրիտանական պաշտպանելու պաշտօնով, սակայն կառավարութիւնը կրնար իր պատուոյն դէմ համարելով ետ ձգել բայց հասարակաց կարծիքը Եւրոպայի մէջ զորդուած ըլլալով ուղեց չուղեց լուռ կեցաւ, բնէ է թէ քանի մը Սէրանիկի մոլեռանդներու ըրած այդ ուղիքը բարոյական բոլոր մահմետականաց վրայ ծանրանալով բրիտանականներն բրիտանական տեղութեանց պաշտպանութեանը կարօտ ցուցուեցան: Այս մէկը:

Երբ տեղութիւնը ատոնց արժանաւոր պատերազմ տալով, Օսմանեոց պատիւը մարել կը յաջողի, անոյն Պուլկարական անգլիոթիւնեանց դէպքը պատահելով կառավարութիւնը մէկ քանի չարագործաց երեսն Անգլիոյ պէս գործար և հաւատարմի դաշնակց մը կորսնցնել պարտաւորեցաւ և Անգլիոյ մամուլն նախապէս չը մնաց որ չընէր Օսմանեան ազգին դէմ, որոց և ոչ մէկը կրնանք

յիշել հոս, սակայն անտարակոյս ենք որ Օսմանեոց լուսաւորեալ մասը կարգաց ատոնք և խտրեց յաւեցաւ ամենամի իրաւամբ այն վայրի չէրէքաներու դէմ, որ տեղի տուին այսչափ գզուշութեամբ պահուած Օսմանեան պատուոյն կտրուելու և որովհետեւ ատոր երեսն չէրէք ու Պանիոյ վրայ Պուլկարական աղաւթութեան խնդիր մ'ալ ելաւ: Այս երկրորդ:

Երբ տեղութիւնը քննիչներ ղրկելով դատատաններ բանալով և յանցաւորներ պատժելով Օսմանեան ազգին վնասեալ պատիւը ձեռք ձգելու կաշխատէր՝ անդին Եւրոպայի դէպք մը կ'աւ և եւրոպական մամուլն քննադատութեանը նիւթ եղաւ այնքան որ Լորտ Տէրպլի պէս քաղաքագետ մը պարտաւորեցաւ բնէ է Սիւիոյ մէջ քրիստոնէականի կան. անոնք ալ մտածելու էք և այնչափ այս ալ երրորդ:

Արդ եթէ տաճկական մամուլը իր բոլոր ճիգը չը թափէ այս տեսակ մամուլու մոլեռանդական դէպքերն արգելելու, եթէ ատոնց երեսն տեղութեան կրած անտուժելի վրէտանքները ազգին առջև չը դնէ և հաւանական երեցած պատերազմի միջոցին այդ տեսակ մոլեռանդական դէպքեր կրնան, եթէ Անտարպի մէջ իրեն եղբայր պարելու փորձ դուք ալ կ'աւարտէք մի ինչ գաղաւթուր տարածուի, եթէ Պանիոյի մէջ չայտգ մէջ ալ ապստամբութեան խնդր մը եղած ըլլալու մասին ըրած անկրաւ ամբաստանութեանց յարուցած կրքը չը դադուի, և եթէ ինչպէս քանի վերջապէս Անտարպի և Բուսիոյի բրիտանականներու կենքը, ինչք, պատիւ ու կրօնը կառավարութեան կամաց հակառակ՝ պատերազմ չեղած ատենէն առաջ պահանջուածէն հազար անգամ աւելի չը պահպանուի անտարակոյս ինչպէս Սէրանիկի դէպքը ինչոյն կ'արարանքը փութելով, ինչպէս Պուլկարի դէպքը այդ փութելու կերպարանքը ալ աւելի աստիպեց, և ինչպէս Եւրոպայի մամուլը դէպքը Լորտ Տէրպլի բերնին մէջ Ասիոյ բրիտանական խօսք մ'ալ աւելցուց տարակոյս չը կայ թէ պատերազմի միջոցին Անտարպի և Բուսիոյի բրիտանականները չհեղաւոր կամ թրշուաւ կ'անքը՝ գաղիք գոմէրանին մէջ մեծ տեղ մը պիտի բռնէ և հաշտութեան պայմաններուն վրայ մեծ ազդեցութիւն պիտի ընէ:

Ուստի եթէ տաճկական մամուլը քիչ շատ հեռատեսութիւն, քիչ շատ հայրենաւորութիւն և քիչ շատ աշխարհային ընդհանուր բրիտանականութեան ընդհանուր մահմետականութեան աւելի զորաւոր ըլլալուն վրայ դադաւար մը ունի պէտք է հիմնուել թէ միտքը գործէ կրօնամոլութեան դէմ պէտք է յայտարարել թէ մէկ քանի բրիտանական պայմաններու մէջ մեծ ազդեցութիւն պիտի ըլլայ:

Սեք մեր պարտքը կատարելը խոհեմութիւնը քարոզելով և պիտի քարոզելը միշտ կը սպասենք որ տաճկական մամուլն ալ իր պարտքը կատարէ և Օսմանեան ազգին առջև դնէ իր վիճակը, իր շահն ու վնասը:

Սեք այս բնէ ընտել բնաւ չը կարծուի թէ ջարդէ վրէժ ունենք, ոչ, այդ թէ և չը կրնար ըլլալ և ըլլայ ալ վայրենական բան մ'է, սակայն ստոր մեծ վնասն Օսմանեան կառավարութեան է, որոնք միշտ պատմութեան մէջ կը տեսնենք թէ պատերազմի տուն խիստ պատմութեան համար է բրիտանական չը վնասելու և ասանկով կրցած է բրիտանական հայրենական պաշտպանութիւնն, սակայն հիմայ որ Պանիոյի պէս անհեռատես մոլեռանդներն են, որք այն ատեններ չը կ'աշխարհային իրեն հայրենաց մէկ անկողմ բարեկամ պարտք համարեցինք յիշեցնել:

(Նորագիր)

ՀԱՅԵՐԻ ԶԱՐԺՈՒՄԸ ԹԻԻՐԻՍԻՍԻՍԻՍ

Ընթերցողներ արդէն յայտնի է որ հայերի դրութիւնը Թիւրքիայում շատ անմիջապէս է դառնում: Հայերի հաւաքը ընդ 2000-ից աւելի զինեցին Բ. Գուլու և պահանջեցին մի քանի տոր, ամենամահաւոր մարդկային իրաւունքներ: Թիւրքաց կառավարութեան պատասխանը դեռ յայտնի չէ: Այժմ կարողում ենք մայրաքաղաքների ուսումնականի մէջ որ Կ. Պոլսի հայաց Ազգային-Ժողովը վճռեց ներկայացնել տեղութիւններ մի մեծ քանակութիւն (պաշտօնագիր), որի մէջ յիշելով հայերից կրած ճշմունքներ Օսմանեան պետութեան մէջ, հայերը պահանջում են որ խոստացած վերանորոգութիւնները տարածվեն ոչ թէ մի քանի նահանգներում, այլ

ամբողջ պետութեան մէջ: Այդ մեմորանդում պէտք է թարգմանվի ֆրանսիերէն լեզուով և ներկայացվի եւրոպական պետութիւններին:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Ստորագրող. 6-ին հոկտ. 76

Նրկար ժամանակ Գերմանիայի մէջ անցնելով և զբաղված լինելով մանաւոր որոշ աշխատանքներով, գիտութեան և դաստաւորութեան հարցերի մէջ ընկղմված, սահմանափակվելով մի տեսակի մտածմունքներով, շարժվելով թէ և բարձր, բայց այնուամենայնիւ միակողմանի մտաւորական շրջանի մէջ, մարդս երբեմն բողոքում ոչ միայն կորցնում է հակումն դէպի հասարակական աւելի ընդարձակ գործունէութիւն, այլ և փոքր առ փոքր կորցնում է նաեւ ամենայն հետաքրքրութիւն դէպի հասարակութեան վիճակը, եթէ կարելի է ասել եսական դառնում: Այն ինչ որ նկատվում է մի առանձին մարդու մօտ, երբեմն ընդարձակվում է և ամբողջ հասարակութեան վերա: Ընդհանուր թմբուկի միտում է երբեմն ամբողջ հասարակութեան, երբ բոլոր հասարակական և քաղաքական գործերը իրանց ճանապարհով են դնում, էլի մի քայլ,— և հասարակութիւնը կը կորցնի ամենայն ձգտումն ինչն իր գործերի մասին հոգալու, ամեն մի անհատ կը մոռանայ ընդհանրութեան համար գործելու, նորա գրութեան մասին հոգալու իր պարտաւորութիւնը կը հրաժարվի:

Այս մտածմունքները ակամայ իմ մէջ ծնվեցան երբ ես կրկին Գերմանիա վերադառնալով իտալիայից, սկսեցի համեմատել այնտեղի և այստեղի հասարակական կենսանքը: Անկապած Գերմանիան շատ բաների մէջ գերազանցում է իտալիայից: Այստեղ ուսումնարանները, համալսարանները, դիտութիւնը առհասարակ անհամեմատ աւելի ծագած է. երկրի տնտեսական դրութիւնը աւելի կանոնաւորված է. անհատի անձնականութիւնը և սեփականութիւնը աւելի ապահով է գուցէ. դրա գիտութիւնը ընդհանուր է, կարելի է ասել—մինչ որ իտալիայում դեռ մի բաւական մեծ արգելադրութիւն կը գործէ, որովհետեւ մարդկեանց: Բայց եթէ համեմատենք գերմանացուն իտալացու հետ, իբրեւ քաղաքական անձն—նորան շատ աւելի յստի կը զգուշենք այդ վերջինից: Իտալացին աւելի ազգային է, իսկ այն պատճառով, որ նորա նախնին ազգային ձգտումներն միշտ արգելք էին դնում հակաազգային բռնաւոր կառավարութիւնները և այդ արգելքը աւելի զարկեցնէր իտալիայի զանազան դասակարգի մէջ ձգտումն մի ամբողջութիւն կազմելու:

Գերմանիան ընդհակառակ թէ և նոյնպէս բաժանված էր զանազան մանր պետութիւնների, բայց զոգանից ամեն մէկը ձգտում էր եթէ ոչ առանձին դեր խաղալու, դոնեա երկրորդական դերով ինչների մօտ մի հակակրօնական յարուցեց գերմանական զանազան ցեղերի մէջ: Հիւսիսային գերմանացին արհամարհում էր իր հարաւային հայրենակցին, հարաւային գերմանացին ատում էր հիւսիսի իր ցեղակցուն: Այդ իմացան պահպանել կառավարիչները, այն ժամանակ դեռ կըրթութեան աւելի ստոր աստիճանի վերա կանգնած ժողովրդի առանձնային ձգտումները արմատացնելու համար, նրան կուրացնելու համար, որ յետոյ աւելի յաջող լինէր նորա հարստահարութիւնը: Այդ քաղաքականութիւնը այնքան յաջողեցաւ, որ այժմ էլ, չը նայելով որ բոլոր գերմանական երկիրները միաւորված են, բայց վերաւերջինքն կամ Բաւարացին չէ կարող անկեղծ պատել Պրուսացուն, իսկ այդ վերջինը ասում է որ հարաւային գերմանացիներն դեռ են պէտք է մի զինեցվալիս ինքնարկել, որ նորա էլ մարդ դառնան:

Այդ մանաւորութիւնը (Particularismus) էր և է ամենամեծ թշնամի գերմանական ազգի և այնքան ընդհանուր է նրան, որ յատուկ է և Եւրասիաներին, որոնք թէ և չեն ուզում խոստովանվի իրանց գերմանացի լինելը, բայց միշտ ապացուցանում են որ գերմանական ցեղին են պատկանում իրանց մանաւոր ձգտումներով և ոգով:

Ես մի անգամ առիթ ունեցայ պարտիկուլարիզմի օգտակար հետեւանքները ցոյց տալու, որոնք պարտնալիւմ են գլխաւորապէս զորանում, որ հակառակ են մի խիստ կենտրոնական նուութեան, բայց և դորա վնասները անչափ մեծ են և դորա մասին ուզում ենք ասել մի քանի խօսք գերմանացու քաղաքական զարգացման վերաբերութեամբ:

Պարտիկուլարիզմի յատկանիշ կողմերից մինը այն էր, որ նա գրգռում էր գերմանական մի ցեղ

միւսի, հարեանի դէմ, ոչ հաշտ մրցութեամբ, այլ ատելութիւն սերմանելով ժողովրդի մէջ իր հարեանների դէմ: Գլխաւոր ուղադրութիւնը դարձած էր դէպի երկրի դուրսը, իսկ ներսը կառավարութիւնը անպատիժ գործում էր ինչ որ կամենում էր, և ճշմարտ, 17-դ դարից սկսած մինչև այս դարի երկրորդ կէտը, Գերմանիայի ամենայն մի փոքր դուքս կամ իշխան անսահման իրաւունքներ ունէր իր ժողովրդի վերա: Յայտնի են ամեն, քին այն անչափ զեղծումները կառավարիչների կողմից, որոնք պատճառ եղան բազմաթիւ քաղաքականութեան դէպի Ամերիկա—Ժողովուրդը ճնշված էր և կորցրել էր փոքր առ փոքր թէ հետաքրքրութիւն, թէ ցանկութիւն ընդհանուր հասարակական գործերի մէջ խառնվելու—նա կրաւորականացաւ:

Այդ բոլոր պատճառները գիտնալով, դժուար չէ մենք իր ըրան անտարբեր է գերմանացիների մեծ մասը հասարակական գործերի մէջ: Ասեմք նոր ընտրութիւններ են կատարվում ժողովրդի ներկայացուցիչների համար—գերմանացիներից շատերը չեն էլ դնում քուէարկելու, չեն էլ մասնուում իրանց իրաւունքները գործադրելու պարտաւորութեան մասին—իսկ դա ճշմարտ մի պարտաւորութիւն է ամեն աղին քաղաքացու համար իր իրաւունքները իրեն հասարակութեան անդամ գործածելու—իտալացին չէ արհամարհում, ընդհակառակ մասնակցելու ամեն հարցերում, ուր նա կարող է իր համոզմունքով, իր քուէով նպաստել: Ընտրութիւններին մասնակցելու նա իր սուրբ պարտաւորութիւն է համարում: Փաւարկութեան օրը կը տեսնէք իտալիայում որ վաճառականը իսանութիւն կը փակի, գործարանատէրը իր մշակներին կարճակի, որովհետև նրանք պիտի մասնակցեն քուէարկութեանը:

Այս մեծ բան է սովոր և վարժ լինել՝ քաղաքացու իրաւունքները և պարտաւորութիւնները վարելու, և այդ է իսկ որ իտալացին շատ աւելի լաւ է հասկանում, քան թէ գերմանացին և ֆրանսիացին:

Գերմանացին մոռացել է իր պարտաւորութիւնները և իրաւունքները, որովհետև նա գոչ է իր կառավարութիւնից, որովհետև նորա կառավարութիւնը նորա մասին հոգում է, ինչպէս մի մայր իր երեխայի վերա: Բայց ցանկալի է, որ վերջապէս դարձին և դոցա մօտ քաղաքական ոգին և դորա համար մինչև անգամ վաճառուր միջոց օգտակար կը լինէր: Շատ օգտակար կը լինէր օրինակ, եթէ պահպանողական կուսակցութիւնը բազմութիւն ստանար, իսկ կալիստիկ յետ առնել տալ ազատական օրէնքների մի բանիներ և այն ժամանակ ժողովուրդը կը սթափվէր, կը զգար որքան լիանգ են նրան իր իրաւունքները, և կուսակցական պատերազմից որ անպատճառ կը ծագէր, կը ծագէր նոյնպէս և մի նոր դարապետ Գերմանիայի քաղաքական զարգացման:

Ցանկանա՞նք առաջ ա դիմում ի և նա համար, որ այս անգամ պահպանողականները և յետագայ է մնալ իր յաղթող դուրս գային ընտրութիւններին:

Ա. Արծրունի

ԻՍԼԱՄ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիայի երկու օպերայիստ պ. Լուի-Բյան շուտով կը հրատարակի տալ փարիզում մի լրագիր «Ազատ Մարդ» վերնագրով, երեք օրպէս իր սեպհական օրգան:

Այսու են որ Սլաւոնայից դուրս արած Գոն-կարուր ղեկավարութիւն ունի Փարիզում մի լրագիր հրատարակել տալ «La Pensée Catholique» անունով: Այդ էր պակաս, կարծես թէ Ֆրանսիայում կաթոլիկական մտքը քիչ էին, և կարիք էր զգացվում էլի աւելացնել...

Նորին անսխալականութիւնը՝ իրան հնարած ծանուանող Պիոս IX-ը՝ ամսական 700,000 ֆրանկից աւելի է եղել ծախսում: Չը գիտենք այս գումարի հետ հաշւած է արդեօք նորա ամեն տեսակ պատ ու ծոմ պահելը, թէ ոչ...

Մեզ գրում են Գան ձախից՝ Թէպէտ ետ երաջի հաւատացողներից և Էփիմիոնի պատուիրակից չեմ, բայց չար սատանան ինձ ամենին հանդուստութիւն չէ տալիս: Ան ուրիշ ամսից մօտ է, որ ամեն գիշեր երազումս տեսնում եմ, որպէս թէ գերի ընկած մէկ բաշլը-բուզուկի ձեռքը, դա անդադար ինձ սպասնում է և ասում՝ «Աչքդ հանցել, էլի պիտի գամ մեծ սայլի ստորոտից, փաշայութիւնս ստացած, քո ջանդ 500 թոփ էր, որ բաց թողնել միջաւորած հաշուով, ավ կարող է այսուհետև դէմ կենալ իմ երկայայի թրին... հազար բողաւս, հազար կոչես, լսող չը կայ... Ողջ

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ